Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին

անկախ լրագրող Ադրինե Թորոսյանից

ՀՀ քաղաքացի

adrinetorosyan@yandex.ru

հեռ. 041 796 996

Տեղեկություն ստանալու հարցում

Պարոն մարզպետ, դեռևս 11.12.2020 թվականին Լոռու նախկին մարզպետին հասցեագրված տեղեկատվության հարցմանս ի պատասխան՝ 30.12.2020 թվականին տեղեկատվության տրամադրման ժամկետների խախտմամբ վերջապես ստացվել է մի պատասխան գրություն, որով չեն տրվում հայցածս հարցերի պատասխանները: Նորից հղում անելով ՀՀ սահմանադրության 27 և 27.1 հոդվածներին և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկությունները՝ յուրաքանչյուր կոնկրետ հարցին կոնկրետ պատասխան՝ թվական, փաստական, ժամանակագրական տվյալներով, փաստաթղթային հիմքերով (դրանց առկայության դեպքում):

1. Պատերազմի ընթացքում ընդհանուր քանի՞ զրահաբաճկոն, անձրևանոց, քնապարկ, զինվորական հանդերձանք և այլ անհրաժեշտ իրեր ու պարագաներ են Լոռու մարզից ուղարկվել բանակին:
2. Ի՞նչ ձևով է այդ գործընթացը կատարվել. մարզպետարանն արտադրողից արտադրանքը վերցնելով՝ ուղարկել է այն պաշտպանության նախարարությա՞նը, թե՞ անմիջապես պաշտպանության բանակին. նշել ամսաթվեր և ուղարկված խմբաքանակ:
3. Լոռու մարզում ո՞ր գործարաններն են ապահովել այդ արտադրանքը, յուրաքանչյուրն ի՞նչ ծավալով և որ արտադրատեսակից ինչքա՞ն:
4. Կոնկրետ «Սարտոն» և «Գլորիա» կարի ֆաբրիկաներն ի՞նչ արտադրատեսակներ են փոխանցել մարզպետարանին, դրանցից քանի՞սն է մարզպետարանն ուղարկել ճակատ, իսկ չուղարկված մասը (եթե կա այդպիսի խմբաքանակ) ի՞նչ է արվել կամ արվելու:
5. Արտադրանքը պետպատվերի շրջանակո՞ւմ է եղել, եթե այո, որքա՞ն գումար է հատկացվել պետբյուջեից այդ նպատակով: Իսկ եթե պետական պատվերի շրջանակում չէ, խնդրում եմ նշեք՝ մարզպետարանն ունեցե՞լ է համաֆինանսավորում կամ հումքի տրամադրման ձևով մասնակցություն արտադրանքին, թե ոչ (վերջին դեպքում խնդրում եմ նշեք մատակարարված յուրաքանչյուր միավորի գինը և յուրաքանչյուր արտադրատեսակի համար փոխանցված ընդհանուր գումարի չափը):

Քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ մարզպետարանն արդեն խախտել է օրենքով սահմանված ժամկետները և նույնիսկ չի տեղեկացրել ուշացման հիմքերի մասին, ուստի՝ տեղեկություն ստանալու միևնույն՝ արդեն երրորդ անգամ ուղարկվող հարցմանս պատասխանը

տրամադրեք անհապաղ և ամբողջական: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում գրավոր տեղյակ պահեք մերժման հիմքի մասին (հոդված 11):

Ադրինե Թորոսյան

08.01.2021